Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան 25 հունվարի, 2023թ.

<u>Ժողովի նախագահ՝</u>
Ս. Սուքիասյան - Խորհրդի նախագահ

<u>Ժողովի քարտուղար՝</u>
Լ. Պետրոսյան - Խորհրդի անդամ, Քարտուղար

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովը կայացավ 2023թ. հունվարի 25-ին՝ Խորհրդի նախագահ Ս. Սուքիասյանի նախագահությամբ:
Բանկի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել էր 2022թ. դեկտեմբերի 02-ի դրությամբ՝ ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:
Համաձայն Հաշվիչ հանձնաժողովի ներկայացված տվյալների՝ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,950,295 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,530,256 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 78.46%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր է ճանաչվել 3 քվեաթերթիկ 41 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:
Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատում՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի 20-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը 27,186,784,000 ՀՀ դրամ կազմելու վերաբերյալ:

Քվեարկության ամփոփման արդյունքում հաշվիչ հանձնաժողովի թիվ 1 Արձանագրության տվյալները հետևյալն են.

1.«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,530,215 ձայն կամ մասնակիցների ձայների 99.997%
Դեմ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 41 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի կազմը հետևյալ տեսքով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան
Լիազորությունների ժամկետը սահմանել մեկ տարի:

2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատում՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի 20-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը 27,186,784,000 ՀՀ դրամ կազմելու վերաբերյալ:

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,530,215 ձայն կամ մասնակիցների ձայների 99.997%
Դեմ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Ձեռնպահ՝ 0 ձայն կամ մասնակիցների ձայների 0%
Անվավեր՝ 41 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ նոր խմբագրությամբ Կանոնադրությունը՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի 20-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը կազմում է 27,186,784,000 ՀՀ դրամ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ /Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

ՔԱՐՏՈՒՂԱՐ / Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/